ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ /1-ին/

<<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհերի հրաբխային ավազների հանքավայրում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

2025թ. մարտի 28-ին ժամը 14:00-ին, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում տեղի ունեցավ <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի կողմից նախատեսվող ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհերի հրաբխային ավազների հանքավայրում նախատեսվող հանքարդյունահանման աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման վերաբերյալ հանրային քննարկումներ /1-ին քննարկում/:

Հանրային քննարկումներին մասնակցում էին ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական ղեկավար՝ Նաիրի Բաբայանը, ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Սամվել Իխտիարյանը, Վայք համայնքի ղեկավարի օգնական Մեսրոպ Մեսրոպյանը, Բնապահպանության և Գյուղատնտեսության բաժնի պետ Գարիկ Գևորգյանը, Զարգացման ծրագրերի, սոցիալական աջակցության և առողջապահության հարցերի բաժնի պետ Նորայր Հովակիմյանը, <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի տնօրեն Մ. Շամլյանը, Ընկերության բնապահպանական խորհրդատուն, համայնքի և բնակավայրի բնակիչներ:

Ելույթ ունեցան

ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական ղեկավար՝ Նաիրի Բաբայանը, նշեց, որ համայնքում իրականացնում են 1-ին հանրային քննարկումները: Համայնքը պատշաճ ծանուցված է, ամեն ինչ նորմայի սահմաններում է, մենք շահագրգռված ենք, որ իրականացնեն նման գործունեություններ, որ որոշակի ընտանիքներ աշխատեն, բարելավվի համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակը:

Ելույթ ունեցան նաև ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի համայնքապետարանի քաղաքաշինության բաժնի պետ Սամվել Իխտիարյանը, ով ևս կարևորեց հանքարդյունահանման աշխատանքների իրականացումը համայնքում և միաձայն

ողջունեցին և խնդրեցին, որ աշխատողները լինեն ազդակիր բնակավայրի վարչական տարածքից:

<<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ-ի բնապահպանական խորհրդատուն ներկայացրեց ՀՀ օրենսդրությունը, որ համաձայն <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները ենթակա են շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության 2 հանրային քննարկումների իրականացմամբ, ներկայացրեց իրենց մտադրությունները, որ եթե համայնքը կտա իր նախնական համաձայնությունը՝ ավագանու որոշմամբ, ընկերությունը կսկսի նախագծային աշխատանքները:

Նշեց նաև, որ նախատեսվելիք աշխատանքներն իրականացվելու են ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների համապատասխան:

Ընկերությունն իր պատրաստակամությունն է հայտնում պարբերաբար հանդիպելու համայնքի ղեկավարության հետ, քննարկելու անհրաժեշտ օգնության ծրագրերը և համապատասխան ֆինանսական ներդրումներ կատարել համայնքի բյուջե:

Ելույթ ունեցան համայնքի և բնակավայրի բնակիչներ, ովքեր միաձայն ողջունեցին նախատեսվող գործունեությանը:

Ամփոփելով հանրային քննարկման արդյունքները՝ մասնակիցները որոշեցին հավանություն տալ <<ՄՎ ՇԻՆ>> ՍՊԸ կողմից ներկայացված ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի Հերհեր բնակավայրի վարչական տարածքում նախատեսվող ՀՀ Վայոց ձորի մարզի Հերհերի հրաբխային ավազների հանքավայրում հանքարդյունահանման աշխատանքներին:

Կից ներկայացվում է մասնակիցների ցանկը՝ 1 թերթ:

Քննարկումների պատասխանատու և վարող՝ Վայքի համայնքապետարանի գյուղատնտեսության և բնապահպանության բժանի պետ Գարիկ Գևորգյան

Ձեռնարկող՝ «ՄՎ ՇԻՆ» ՍՊԸ տնօրեն Մինաս Շամլյան

Списъкът предстои

Иванка	Цветанова	с. [illegible]	077-19-10-58
Петрана	Димитрова	[illegible]	098081873
Ева	Грибулева	[illegible]	093817385
Христо	Недялкуулев	[illegible]	098-96-39-30
Христина	Чилдъмитрова	[illegible]	094.66.24-20
Иванка	Стоянова	[illegible]	078344 966
Иванка	Кирилова	[illegible]	098 83 90 57
Елена	Тилкерова	[illegible]	094 73 50 83
Ивана	Ганева	[illegible]	098 79 80 89
Ангел	Ангелов	[illegible]	077 90 96 13
Ангелина	Ангелова	[illegible]	093026696
Ваня	Антонова	[illegible]	091472933
Иванка	Тодорова	[illegible]	098705009
Здравка	Димитрова	[illegible]	077 50-91-50
Янка	Хаджиева	[illegible]	094 20 10 31
Ганка	Тилкова	[illegible]	093 003 209
Ивелина	Христова	[illegible]	077 65 70 79